

ՆՈՐ ԱՎԵՏԱՔԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՂԷՊ, 17 ՆՈՅԵՄԲԵՐ, 1930

ԹԻԻ 20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Բ. ԹԱԿՈՐ ԺԸՆԵՒԻ ՄԷՋ

Բ. Մ. ԵՂԻԱԵԱՆ

ՌՎ ԿՐՆԱՅ ՓՐԿՈՒԻԼ

ՎԵՐ. Թ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ԽԱԶԻՆ ՃԱՄԲԱՆ

Հ. Թ. ՅԱԿՈԲԵԱՆ

ՏԱԿԱՒԻՆ ԶԵՐ ՃԱՆԶՆԱՐ

ՌՇՏՈՒՆԻ

ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ ԱՐԺԷՔԸ

ՏՈԳԹ. Ա. ԱՊՈՒՀԱԹԱԹԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԿՈՐԾԱՆՈՒՈՂ ԵԿԵՂԵՑԻՆ

ԱՌԱՆՅ ՓՈԽԱՐԺԷՔԻ

ՓՈԽՈՒԱՄ ԶԱՓԱՆԻՇԸ

ՇԱՀԵԿԱՆ ՆՕԹԵՐ

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱՂԷՊ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԳԻՐ

Ազգայնաբանութիւն Զարդ Տիգրանի
գրութեան

ԳԼՈՒԽ Գ.

Սքրոգի քեռորդւոյն քոյրը լաւ սքրինդ կը նուագէր, և ուրիշ երգերէ վերջ սկսաւ նուագել մասնաւոր եղանակ մը. ասիկայ Սքրուճի շատ լաւ գիտցած մէկ եղանակն էր, այն եղանակը՝ որ փոքրիկ աղջիկ մը կ'երգէր շատ տարիներ առաջ. փոքրիկ աղջիկը՝ որ Սքրուճը տուն տանելու համար զպրոց եկած էր այն ատեն՝ երբ Սքրուճ տակաւին գիւղերօթիկ դպրոցին մէջ կ'ուսանէր: Այս եղանակը մօտիկ ըրած ատենը՝ Սքրուճի յիշողութեան մէջէն կարգաւ կ'անցնէին Անցեալ Ծնունդի Ոգիին բոլոր ցուցուցած բաները, ու Սքրուճի սիրտը չղիմացաւ, սկսաւ խորհիլ, «Ա՛խ», կ'ըսէր իւրովի:

«Եթէ տաքիններ առաջ յաճախ աս երգը մօտիկ ըրած ըլլայի տարբեր մարդ մը եղած պիտի ըլլայի, ո՛հ, որքա՛ն կը փափաքիմ բարի սիրտի մը պարզեւած իսկական երջանկութիւնը ճաշակելու ևս որ մահուան մէջ փնտրած եմ իմ միակ հանգիստը»:

Սակայն ամբողջ իրիկունը երգով չանցուցին, քիչ մը երգելէ վերջ խաղի սկսան, չէ՞ որ երբեմն մանուկներու պէս ըլլալ պէտք է մանաւանդ Ծնունդի օրերը, երբ Ծնունդին Տէրը ևս մանուկ էր: Առաջին անգամ աչք կապուկ խաղալ սկսան: Թափերին աչքը կապեցին, ու ան սկսաւ սողին անդին պտըտիլ իրենցմէ մէկը բռնելու համար: Զարմանալի՛ բան, կտրծես թէ Թափերին աչքը իր կօշիկին մէջն էր, անիկայ այնքան ճշտութեամբ կը հետեւէր ճերմակ օձիքով գիրուկ աղջկան, որ մարդուն հաւատալը չէր գար թէ աչքերը կապուած են:

(Շար.) 25

(Շարունակութիւն խմբագրականին)
պատճառները կ'ուզենք կարեւոր թերացումի մը վրայ ծանրանալ: Հայ Աւետարանականութիւնը իր իսկ գատին համար չունի պէտք եղած գրականութիւնը: Իր սկզբունքները, հոգևոր նպատակը, հոգևոր փորձառութիւնները յաւերժացնող և տարածող գրականութենէ զուրկ է գրեթէ: Մօտաւորապէս մէկ դար անցած է աւետարանական շարժումը Հայերու մէջ մտնելէն ի վեր, և սակայն ոչ մէկ լուրջ ջանք կատարուած է անոր պատմութիւնը գրի առնելու համար: Հայ Առաք. Եկեղեցին գրեթէ ըսկիւրէն մինչև հիմա անընդհատ արունեցած է իր պատմադիրները: Աւետարանական շարժումին առաջին սերունդին պատկանող սակաւաթիւ անհատները և ուրիշներ ինչո՞ւ գրի չեն առներ իրենց

կեանքի յուշերը: Ասիկա անհերքի թերացում մըն է: Երկրորդ՝ Հայ Աւետարանական Եկեղեցին շատ քիչ մշակած է հոգևոր բանաստեղծութիւնը, որ լաւագոյն կը ցուայնէ ենթակային կամ համայնքին հոգևոր ապրումները և փորձառութիւնը: Մեք երգերով շատ մեծ մասը թարգմանութիւններ են: Երրորդ՝ Հայ Աւետարանականութիւնը մասնաւորապէս և Հայութիւնը բնդհանրապէս անհրաժեշտ պէտքը ունին հոգևոր կրթութիւն, ճոխ գրականութեան. կրօնական շինիչ գիրքերու պէտքը շատ զգալի է: Հայ Աւետ. Եկեղեցին ի՞նչ բաներ ունեցած է այսպիսի ինքնատիպ գրականութեան մը ստեղծումին մէջ և որչա՞փ ունի ներկայիս: Կը կարծենք թէ Աւետ. Եկեղեցին մեծ պարտականութիւն մը ունի կատարելիք այս մարզին մէջ:

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՆԿՊ, 17 ՆՈՅԵՄԲԵՐ, 1930

ԹԻԻ 20

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՆՈՐՈՇԻՉ ԳԻԾԸ

Դ.

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գրականութիւնը իր մէջ լաւագոյնս կը ցոլացնէ ուէ ժողովրդին քաղաքակրթական մակարդակը. անիկա դարեւ ժառանգին գանձարանն է, ուր պահուած են ցեղին անցեալ բոլոր տպւորումները, փորձառութիւնները, իտէալները, խրենց պարտութիւններն ու նուաճումները, իրենց թշուառութիւններն ու փառքը:

Գրականութիւնը ներկայ սերունդը անցեալին հետ կը կապէ անոր փոխանցելով անցեալի հուաքուած հարստութիւնը, և գրգիռ մը կ'ըլլայ նոր երազներ և զաղափարականներ ստեղծելու, որոնք զինքը կը մղեն գէպի ապագան: Այն ժողովուրդը որ գրականութիւն չունի միշտ կը մնայ քաղաքակրթութեան նախնական աստիճանին վրայ, և ենթակայ՝ վերջնականապէս կորստելու: Մէկ խօսքով ժողովուրդին կենսունակութեան և զարգացման թէ՛ չափանիշը և թէ՛ կարեւոր մէկ ազգակն է գրականութիւնը:

Քրիստոնէութիւնը առաքելական դարուն իսկ ունեցաւ իր գրականութիւնը, — պատմական, կենսագրական, վարդապետական, ևս — որուն մէկ մասը ամփոփուած է մեր ներկայ նոր կտակարանին մէջ: Եւ առաջին դարէն սկսեալ մինչև հիմայ առաքեալներու, ա-

ւետարանիչներու, միսիոնարներու միջոցաւ քրիստոնէութիւնը ուր որ քարոզուած է հոն ստեղծուած է նաեւ գրականութիւն. չառ մը հին և նոր ցեղեր, երկրներ իրենց զին և գրականութեան ծագումն ու զարգացումը կը պարտին քրիստոնէութեան:

Գրական դպրոցի մը տեսակէտին համեմատ գրականութիւնը ինքնին նըպատակ մըն է, այսինքն պէտք է գրականութիւն ստեղծել գրականութեան սիրոյն: Իսկ ուրիշ դպրոցի մը հայեցակէտին համեմատ գրականութիւնը նըպատակ չէ, այլ միջոց մը որոշ նպատակի մը իրագործման համար. այս երկրորդ դպրոցը կը կոչուի օգտապաշտ: Մեր նըպատակէն դուրս է այս երկու դպրոցներու բաղդատական արժէքները քննել և յայտնել: Բայց կրնանք ապահով կերպով ըսել թէ գրականութիւնը քրիստոնեայ եկեղեցիին մէջ ծագում չէ առած՝ զայն իբր նպատակ ընդունելով, այլ որոշ նպատակի մը իբր միջոց ծառայելու համար: Ս. Գիրքը չէ գրուած պարզապէս բանաստեղծելու, պատմութիւն մը գրած ըլլալու համար, այլ պատգամ մը հաղորդելու համար: Աւետարանները գրուած են նորադարձ քրիստոնեաները՝ Քրիստոսի կեանքին և վարդապետութեան ծանօթացնելու և

այս կերպով անոնց կրօնական կիանքը աւելի գիտակից և զօրաւոր ընելու համար: Իսկ առաքելական թուղթերը զբուռած են եկեղեցիներուն մէջ յառաջ եկած հարցերուն պատասխանելու և դժուարութիւնները լուծելու համար:

Հայերուս մէջ ալ Ս. Մեսրոպ հայկական տառերը հնարեց և Ս. Սահակի հետ Ս. Գիրքը Հայերէնի վերածեց ժողովուրդին՝ Աւետարանի պատգամը հասկնալի ընծայելու համար: Եւ այսպէս Հայց. Եկեղեցին՝ 15 դարերու փառաւոր գրականութեան հիմը դրաւ հոգեւոր նպատակի մը իրագործման համար:

Հայ լեզուն ու գրականութիւնը շատ բան կը պարտին Հայց. Առաք. Եկեղեցիին. հին Հայ գրականութեան գրեթէ բոլոր մշակները, բացառութիւն կազմելով խիստ սակաւաթիւ աշխարհականները, եկեղեցականներ եղած են: Եկեղեցիին գերագոյն պարտականութիւններէն մէկը եղած է Հայ լեզուն և գրականութեան պահպանումը և մշակումը: Հայց. Առաք. Եկեղեցիին այս մարդին մէջ ունեցած ծառայութիւնը անգնահատելի է պարզապէս: Սակայն այս պարտականութեան և ծառայութեան շնչտուելը նպատակէն շեղումի մը պատճառ եղաւ: Հայ կրօնականները երբեմն միայն գրականութեան սիրոյն համար, յաճախ ազգին և եկեղեցիին գոյութիւնը պաշտպանած ըլլալու համար գրիչ շարժած են: Ասոնք ինքնին վեհ և բարձր նպատակներ են, բայց եկեղեցիէն և եկեղեցականէն պահանջուած առաջին և էական ծառայութիւնը գրականէ աւելի և անկէ բարձր բան մ'է: Եկեղեցականը պէտք է հմտանայ իր ժողովուրդին գրականութեան, և տառապանքն պէտք է կարենայ յստակ և անսխալ կերպով խօսիլ և գրիլ անոր հասկնալի լեզուով: ամէնէն առաջ և ամէնէն աւելի անոր հոգեւոր շինութեան համար: Ահա այս էր ինչ որ Սահակ և Մեսրոպ եւ

թարգմանիչները կատարեցին: Անոնց բոլոր գործունէութիւնը կը կեդրոնանար ժողովուրդին հոգեւոր դաստիարակութեան վրայ, որուն համար անոնք եկեղեցիի եւ գրքի լեզուն՝ անոր հասկնալի ձեւի վերածեցին:

ԺԹ. Դարու հայկական վերագարթնութիւնի ամենամեծ և յաջող արդիւնքներէն մէկն է աշխարհիկ հայերէնի գրականացումը: Մխիթարեան Հայրերը շատ կանուխէն ջատագովը հանդիսացան գրաբար գրականութեան մը վերածադկումին. նոյնիսկ աշխարհական գրողները մինչեւ 90 ական թուականները իրարու հետ կը վիճէին թէ գրական լեզուն աշխարհաբար թէ գրաբար պէտք է ըլլայ: Եւ Հայց. Առաք. Եկեղեցիին պաշտօնական լեզուն մինչեւ հիմա զբարար է. թէպէտ գործնականապէս մասամբ՝ ան տեղի տուած է աշխարհաբարին առջեւ: Իսկ Հայ Աւետ. Եկեղեցիին այս բոլորը կանխեց՝ իր ծագման օրն իսկ ժողովուրդին գործածած աշխարհաբարը ընդունելով իբր հաղորդակցութեան միջոց: Աւետ. բեմը և մամուլը մեծապէս սատարեցին ռամկօրէնի գրականացումին և տարածումին, և այս կերպով ծառայած եղան որ հայ գրականութեան ստեղծումին և մշակումին:

Սակայն ասոր մէջ Հայ Աւետարանական շարժումին ուղղուած նպատակակէտը եղած է ժողովուրդը հոգեւորապէս սընուցանել՝ իբր միջոց միայն գործածելով անոր խօսած լեզուն: Պէտք է հոս խոստովանիլ թէ Հայ Աւետարանական Եկեղեցականութիւնը և համայնքը ներկայ նոր հայ գրականութեան մէջ շատ քիչ բաժին մը ունին. ասոր կարեւոր պատճառներէն են Աւետարանական շարժումին օգտապաշտ միտումը, անոր հազիւ մէկ դարու կարճ պատմութիւն ունենալը և լայն:

Զանց առնելով յիշիլ արդարացումի (Շար. Մանուկներու եղին սակն է.)

ԲԱՊԻՆՏՐԱՆԱԹՆ ԹԱԿՈՐ
ԺԸՆԷՎԻ ՄԷՋ

Բ.

Անցեալ տարի Թակոր հրաւիրուած էր Միացեալ Նահանգներու մէջ շարք մը լէքչըրներ տալու. սակայն Մ. Նահանգներու կառավարութեան Ասիական ժողովուրդներուն հանդէպ բռնած անհիւրընկալ դիրքին հետեւանքը եղող վիզի միջադէպէ մը ազդուած՝ մերժեց հոն մտնել: Պատահութիւնը խլովները եղան ճարտանցիները. հրաւիրեցին զինք և Թակոր գնաց Մ. Նահանգներուն մէջ տալիք լէքչըրները Ճարտնի մէջ տալու: Անկէ անցաւ Քանադա, ու մեծ պատիւներով ընդունուեցաւ: C. F. Andrews որ իրեն կ'ընկերակցէր՝ կ'ըսէ թէ փողոցէն անցած ատենը խռնուած բազմութիւններ լուռ ու զխաբաց կայնած կը մատուցանէին իրենց յարգանքը Արեւելքի այս մարդուն: Եկաւ Անգլիա, ուր Լոնտոնի՝ Օքսֆորտի՝ Պրիմիկհամի մէջ կարեւոր բանախօսութիւններ ու լէքչըրներ տուաւ՝ մասնաւորաբար լուստարանիւ ջանալով Անգլո-Հնդկական քաղաքական հարցին վրայ իր տեսութիւնը, ուր եւս իմաստուն գործակցութեան ճամբան կը թելագրէր: Յետոյ՝ Եւրոպայի զանազան կիզրոնները այցելելէն վերջը հասաւ Ժընեւ՝ Միջազգային Ոստանը՝ և մնաց մօտ 10 օր, ասկէ մեկնելու համար Բուսիա եւ վերջը նորէն Մ. Նահանգները: Իրեն հետ տեսակցութիւն ունեցան հոս Եւրոպացի նշանաւոր գրողներ, ինչպէս Romain Rolland եւ H. G. Wells, և քաղաքագէտներ:

Ազգերու Լիկայի Քարտուղարատան պաշտօնէութեան իր շնորհած ժամուայ մը տեսակցութեան առիթէն օգտուելով՝ ես ալ կերպով մը կը յաջողիմ այդ խում-

բին խառնուիլ, եւ յետոյ կը ներկայանամ իրեն իբրեւ Հայ մը: Բայց նախ քան այդ տեսակցութեան մասին խօսիլս՝ յառաջ պիտի բերեմ քանի մը հատ իր կեանքի դրուագներէն: Կենսագրութիւն մը չունի որ պիտի ջանայի ուրուագծել՝ դժուար է հատարներու ներքեւէն ելլել՝ այլ պարզապէս պիտի արձանագրեմ անձնական դիպքներ իր կեանքէն՝ զորոնք տարի մը առաջ ուրիշ առիթով մը լսած եմ C. F. Andrews ի բերնէն: Վերջինս 18 տարիներէ ի վեր Հնդկաստանի ծառայութեան նուիրուած քրիստոնեայ համբաւաւոր Անգլիացի է, որ նոյնացած է այդ ժողովուրդին՝ որդեգրելով նոյնիսկ անոր կենցաղը, և սիրուած անոր կողմէ: Անձնական բարեկամն է թէ՛ Կանտհիլին թէ՛ Թակորին, եւ անոնց հետ կ'ապրի: Եւ երբ հիմա Թակորն ու զինք քովէ քով կը տեսնեմ, որքա՜ն նմանութիւն գոյացած կը գտնեմ իրենց միջեւ, խորհուրդներու՝ մտայնութեան՝ զիմացծի արտայայտութեան՝ եւ նոյնիսկ լեզուի շեշտերուն՝ առողանութեան՝ ձայնի ելեւէջներուն ու խօսելու ոճին մէջ:

Հարուստ ազնուական մըն էր Թակորին հայրը: Երբ ծերացաւ կեանքէ յոգնած՝ Արեւելեան սովորութեան համեմատ որոշեց առանձնապէս Բապիտրանաթի Թակոր այն ատեն պատանեակ մըն էր, զոր հայրը շատ կը սիրէր: Մարդը կրնար իր ամբողջ հարստութիւնէն զատուիլ, բայց ո՛չ իր այս զաւակէն: Ուստի զայն ալ իր հետ առաւ, և ելաւ իր ուխտագնացութեան: Նախ զնաց Հիմալաիա լեռնաշղթային վրայ թափառելու, բայց չգտաւ իր խաղաղութեան կայանը, ուր նստէր ճգնելու: Իջաւ Գանգէսի ափերը: Հոն ալ երկար թափառումներէ վերջ՝ օր մը իրիկուան դէմ, ճամբորդութիւնէ յոգնած ու պարտուած՝ հասաւ բարձրակայան դաշտի մը որ կ'իշխէր շրջակայքին վը-

րայ: Բըրադաշտին կատարը՝ կողք կողքի միայնակ կանգնած էին զոյգ մը ծառեր: Այգ ծառերու խորհրդաւորութիւնը զինք գրաւեցին, ու ծերունին իր գլուխէն հետ բարձրացաւ հոն: Ժամըն էր մայրամուտի, և արեւը հրաժեշտի իր լոյսերէն շաշլ խուրձ մը նետած էր ծառերուն վրայ, որ թռթռացող տերեւներու ընդմէջէն կը մազուէր անոնց քրտնած ճակտին: Ուխտաւորը նստաւ ծառերուն ներքեւը՝ հանգչելու, և անմինչ կը դիտէր լեռներու հտեւէն մինչեւ իր որդւոյն ճակատը երկնցող և տերեւներուն եզերքները ոսկեղառող այգ լոյսին շաւալքը՝ իրեն այնպէս թուեցաւ թէ հորիզոնը փլաւ և անոր հաւելէն լոյսի ահաւոր ու հիանալի յորձանք մը ողողեց իր ամբողջ էութիւնը: Ընդհատ ինչպէս մեծ Պուտտայի պարապային՝ ծերունին հոն զգաց խաղաղութեան և լոյսի առատ հոսում մը իր հոգւոյն խորը, և այդ եղաւ իր «Լուսաւորումի» պահը: Հան դտաւ երջանկութեան և լոյսի առատութիւն մը որ իր կեանքի բոլոր տեւողութեանը մէջ անբաժան մնաց իրմէ: «Այս է իմ շանթիս» (խաղաղութիւնս) ըսաւ, զայն ընտրեց իւր առանձնութեան վայրը, և հան անցուց իր կեանքի մնացած մասը:

Երբ երկար տարիներ ան մնաց նոյն տեղը, չըջաւայ ժողովուրդներուն մէջ առասպել չըջեցաւ թէ ծերունի հոն պահած էր գանձ մը որուն կը հսկէր: Ոճրագործ մը, որ սոսկալի արարքներ կատարած էր, որոշեց զայն մեռցնել ու տիրանալ գանձին: Իրիկուն մը՝ երբ արեւը մարը մտնելու հետ էր՝ եկաւ, իր գաւոյնը մերկացուցած: Պատանին թակոր խորտակաւ կանգնած էր իր հօրը քով: Ոճրագործը յաջողեցաւ. բայց երբ ալեւորին երեսը տեսնելու չափ մօտեցաւ, այնքան զօրաւոր ցնցում մը կրեց իր ջիւղերուն մէջ՝ այդ սուրբ մարդուն լուսաշող դիմագիծին արտայայտութենէն

ու պատանին միամիտ հանդարտութեանէն, որ իսկոյն մէկդի նետելով գաւոյնը՝ ինկաւ ծերունին առջեւ եւ փարեցաւ անոր ոտքերուն: Սոստովանեցաւ իր չար մտադրութիւնը. «Ես ոճրագործ մը մեծցած եմ, բայց հիմա զիս քու աշակերտդ ըրէ:» Ծերունին ոտքի ելաւ՝ բազուկներուն մէջ առած իր դաւադիրը, համբուրեց զայն եւ ըսաւ. «Դուն իմ բարեկամս ես»: Մարդը՝ այնուհետեւ կատարեալապէս փոխուած՝ նետուեցաւ համեստ ծառայութեան կեանքի:

Սրբակեաց ճգնաւորի համբաւը այնքան լայն տարածուեցաւ ու բռնեց շրջակաները, որ շատեր հեռուներէն կուգային իր օրհնութիւնը խնդրելու: Վերջապէս՝ տէրը այն արտին ուր կը նստէր ծերունին եկաւ քանի մը անգամ՝ անոր ծանօթանալու, և երբ զայն մօտէն ճանչցաւ, օր մը՝ անոր հոգիին անուշութենէն գրաւուած՝ եկաւ իր արտին կալուածաթուղթը անոր ոտքերուն առջեւ դրաւ եւ ըսաւ. «Դուն աւելի արժանի ես քան ես՝ այս կալուածին տիրանալ»: Արդ՝ ատիկա ճիշդ այս արտն էր ուր հիմա կը գտնուի Թակորին հիմնած Համալսարանը՝ «Շանթիսիքթիւն» (Տուն խաղաղութեան):

Բապինտրանաթհ թակոր իր հօրը ծառայեց մինչեւ անոր կեանքին վերջը (90 տարեկան): Եւ որովհետեւ շատ գեղեցիկ ձայն մը ունէր՝ կ'երգէր իր հօրը առջեւ, զայն կ'ուրախացնէր ու կ'սփոփէր: Այսպէս սկսաւ ան իր բանաստեղծի կեանքը, իր հօրը ազօթալից շունչին տակ՝ եւ չըջապատուած խաղաղութեան միջոցառումով մը, բնութեան պարզ գեղեցկութիւններուն հետ երես առ երես, անոր երգերուն խառնելով իր ալ անուշ ձայնը, դիտելով արտաքին ու ներքին աշխարհներու գեղեցկութիւնն ու խմորուելով անոնց ազդեցութեան տակ:

Ժընև (Շար.) Բ. Մ. ԵՂԻԱՅԱՆ

**ԸՄՎ ԿՐՆԱՅ ՓՐԿՈՒԻԼ,
ՈՐՈՇՔ՝ ՉԵՆ ԿՐՆԱՐ**

Ս. Գիրքը Աստուծոյ կողմանէ մեղաւորի փրկութեան պատմութիւնն է:

— Ս. Գրքի մէջ փրկութիւնը լծնց կը նշանակի:

— Փրկութեան գաղափարը միշտ յառաջդրմամբ է. այնպէս որ մինչ ան շին կտակարանի մէջ շատ սահմանափակ, արտաքին և մարմնական է, քանի Աւետարաններուն կը մօտենայ աւելի՝ ընդարձակ և ներքին կը դառնայ, իսկ Աւետարաններու մէջ տեւական, ներքին և հոգեւոր վիճակ կը նշանակէ: Զոր օրինակ, Եւց. 14. 14ի և Ա. Թագ. 14. 45ի մէջ պատերազմին մէջ յաղթող ըլլալ փրկութիւն կը նշանակէ: Սաղմ. 34. 6ի մէջ անիկայ նեղութենէ փրկուիլ է: Բ. Թագ. 22 և Սաղմ. 18 գլուխներուն մէջ երբեմն անհատի մը, իսկ երբեմն ազգին փրկութիւնն է: Վերջապէս բառին ամենալեցուն իմաստով Իսրայէլի Եգիպտոսէն ելքը կը նշանակէ: Մարգարէութեանց մէջ իմաստը աւելի ընդարձակ և հոգեւոր է. Երեմ. 31. 32-34ի մէջ անիկայ ոչ միայն Իսրայէլի այլ նաև բոլոր աշխարհի, ոչ միայն մարմնական այլ նաև հոգեւոր փրկութեան իմաստը կ'ստանայ, որ աւելի խորունկանալով նոյնիսկ Քրիստոսի գալուստը, յարութիւնը և ապագային երևան գալիք խաղաղութեան շրջանը և Մեսիայի իշխանութիւնը կը նշանակէ:

— Նոր Կտակարանի մէջ փրկութիւնը կը նշանակի:

— Նոր Կտակարանի մէջ փրկութիւնը նոր և միայն հոգեւոր վիճակ մը, այսինքն Յիսուս Քրիստոսի միջոցաւ իրեն հաւատացողներու տիրանալիք հոգեւոր կեանքը և Աստուծոյ շնորհքները կը նշանակէ:

— Աւետարանի մէջ ո՞ր բացատրութիւններ փրկութեան իմաստով կը գործածուին:

— Փրկանք. այսինքն Քրիստոս մարգիկը ծախու առաւ Եփ. 1.7, Ա. Պետ. 1.18, Յայտ. 5. 9: Բացարձակ. այսինքն Քրիստոս մեղաւորը փոխանորդելով փրկեց զայն. Հռովմ. 3. 26, Ա. Յով. 2. 2: Հաշտութիւն. Մարգ Աստուծոյ դէմ թշնամի էր, բայց Յիսուս երկուքին մէջտեղը մտաւ և զանոնք իրարու հետ հաշտեցուց: Հռովմ. 5. 11: Վերջին կէտ մ'ալ յիշենք. փրկեց. այս կը նշանակէ որ, (վերոյիշեալ բոլոր բացատրութիւնները փրկութեան մէջ առնելով) մեր կեանքը փոխեց և Քրիստոսի մէջ եղած կեանքը, խաղաղութիւնն ու ուրախութիւնը մեզի շնորհեց:

— Ո՞վ կրնայ մարդը փրկել:

— Փրկութիւնը Աստուծոյ անկէ, Անոր կը պատկանի: Երկինքի մէջ և երկրի վրայ Տէր Յիսուս Քրիստոսէն զատ փրկիչ մը չկայ: Մարդը արդէն ինկած և դատապարտուած է, և չի կրնար ինքզինքը ազատել: Ասիկայ միայն Յիսուս Քրիստոս կրնայ ընել, որ կատարեալ Աստուած և կատարեալ մարդ էր: Քանզի իբր մարդ մարդու հետ և իբր Աստուած Աստուծոյ հետ կարեկից և հաղորդակից ըլլալով երկուքին մէջտեղը մտաւ և իր մէջ մարդը Աստուծոյ հետ պիտի կրնայ յարաբերութեան բերել:

— Փրկութիւնը որո՞նց հասկար կարելի է:

— Բոլոր մարդիկ փրկութեան կոչուած են. Յովն. 3. 16, Մատթ. 11. 28: Աստուծոյ կարգադրութիւնը և կոչը բոլորին համար է: Ոչ մէկ մարդ չէ զրկուած. քանզի անիկայ ո՛չ արժանիքով և ո՛չ ալ գործերով կ'ստացուի: Ուստի ամէն մարդ կրնայ փրկուիլ:

— Կա՞ն մարդիկ որոնք պիտի մեռնին:

— Դժբաղդաբար այո. քանզի փրկութիւնը մարդուն համար պայմանաւորեալ է, անիկայ հաւատքէն կախում ունի: Այն որ Որդիին կը հաւատայ կը փրկուի, իսկ այն որ չի հաւատար զատապարտեալ է արդէն:

—Ի՞նչ կը նշանակի սա:

—Այսինքն կը փրկուի այն որ կը հաւատայ և կը վստահի Աստուծոյ սիրոյն, Անոր փրկելու կարողութեան, և խաչի վրայ մահուամբ պատրաստած քաւութեան, իսկ դատապարտուած է եթէ չի հաւատար:

— Ի՞նչ կը նշանակի հաւատք:

— Հաւատք կը նշանակէ Աստուծոյ հետ նոր յարաբերութեան մտնել, որ մեղքի պատճառաւ ընդհատուած էր: Ելեքտրական կոճակը դարձնելով մութ սենեակը ելեքտրականութեան կեդրոնին հետ յարաբերութեան մէջ կը գընենք, որուն իբր արդիւնքը սենեակը կը լուսաւորուի: Նմանապէս հաւատքը մարդուն հոգին Աստուծոյ կեանքին հետ հաղորդակցութեան մէջ կը գնէ և այս կերպով Քրիստոսի մէջ եղած կեանքը մերը կ'ըլլայ: Չհաւատալ յարաբերութեան ընդհատումը շարունակել է:

—Ուրեմն չփրկուած մարդիկ կամն:

—Ան որ չի հաւատար արդէն դատապարտուած է: Իսկ այս մահը ո՛չ Աստուած կը փափաքի և ո՛չ իր կողմէ նախասահմանուած է: Դաւիթի, Աստուած՝ որ սէր է՝ կարգ մը մարդերը մահուան համար չէ ստեղծած, այլ միայն չը հաւատացողը ինքզինքը կը գրկէ Աստուծոյ փրկութենէն և արդէն մեռած է:

—Կա՞յ մեղաւոր մը որ իր մեղքին մեծութեան համար չխտեմայ փրկուի:

—Ոչ. նոյնիսկ Պօղոս, Թգոստինոս, Ճան Պընիըն փրկուեցան: Ասոնց բաժինը իրենց փրկութեան մէջ միայն սա էր. իրենց լոջքերը Փրկչին վերցնել, զԱյն իբր Տէր և Փրկիչ ընդունիլ:

Արդ՝ սիրելի՛ բարեկամ, մի՛ վախճար քու մեղքիդ մեծութենէն, Քրիստոսի արիւնը կարող է ամէն մեղքէն քեզ մաքրել:

Ջանդի

ԹԱԿՈՒ ՇՆՈՐՀՈՒՅԱՆ

ԽԱՉԻՆ ՃԱՄԱՍՆ

Բարեկամիս՝ Վեր. Ս. Աղսպարեանի

Ընտրեցի ես խաչին ճամբան

Թողուցի կեանքն Եպիկուրեան,

Ու քալեցի նեղ ճամբայէն

Շղթայելով խանտանքս ամէն:

Կեանքեր խենչէ աչեր յայրատ

Երբ փոթորկեն կիրքերս իմ վատ,

Ոտքերուն տակ այն վեհ խաչին

Այդ վատ կիրքերս իմ ջախջախութիւն:

«Վշտաց տեղեակ ու ցուոց տէր»

Մարդուն ձայնին երկնահրաւէր

Ռենկնդրեցի «ձորէն վշտիս»,

Խաչելով իմ կամքը յատուիս:

Հոգւոյս աչքերն Գողգոթային

Սեւեռաբիր միշտ կը նային,

Երբ կը հեծեմ այն դժնդակ

Կեանքին խաչի ծանրութեան տակ:

Միշտ պիտ' տանի, Քրիստոսեան

Ծանր խաչ մ'իր ուսին վրան:

Վեհ փրկարար խորհուրդ մը կայ
Այդ անարգուած խաչին վրայ :
Սուր փուշերէն տառապանքի
Յուսոյ Արեւ մը պիտ' ծագի .
Ու նետերէն նախատինքի
Երանութիւն մը պիտ' ծաղկի :
Անկեալ կեանքին վերականգման
Խաչն է ստոյգ առհաւատչեան ,
Ու անարգուած կեանքին համար
Խաչն է պարծանք սփոփարար :
Խաչի ճամբով կեանքին կատար
Պիտի հասնիմ վստահաբար .
Կեանքին մէջէն խաչաչարչար ,
Տեսնեմ Տէրոջ փառքը անճառ :
Հէ՛ք մարդկութեան ախուր կեանքին
Մեծագոյն դասն է այս , անդի՛ն .
Հայ ազգին Տէ՛ր , տո՛ւր անխափան
Երթալ սիրով խաչին ճամբան :
Լառնախաչ Հ. Յ. ՅԱԿՈԲԿԱՆ

ՏԱԿԱԻՆ ԶԷՐ ՃԱՆՉՆԱՐ

Աշխէնի գանձանաղը այս կաղանդին
բուռ բուռ նուէրներու այցելութիւնը
վայելելով ճոխացած էր եւ պարարտա-
ցած : Հայրը , մայրը , եղբայրներն ու
քոյրերը մէյ մէկ բան աւելցուցեր էին
անոր հարստութեան վրայ : Որովհետեւ
Աշխէն՝ հաբուստ ծնողքի զաւակ՝ հինգ
քոյր-եղբայրներու կրտսերագոյնն էր և
հետեւաբար՝ ամէնէն սիրուած : Աշ-
խէն հազիւ 12 տարեկան՝ սկսած էր
կեանքի հաճելի պէսպիսութիւնները
ճանչնալ , թատրոն երթալ , շարժապատ-
կեր տեսնել եւ երեկոյթ կամ ցերեկոյթ
յաճախել :

Աշխէնի համար բան մը պակաս չէր ,
գուրգուրանք , ճոխութիւն , ընկերներու
կողմէ յարգանք , ամէն բան , ամէն
բան :

Տարիուկէսէն պիտի աւարտէր այն՝
թաղային վարժարանը եւ պիտի անց-
նէր Աղջկանց Բարձր . Վարժարանը , որ

հետզհետէ աւելի բարձր ու վսեմ ձեւ
մը եւ պատկեր մը կ'ստանար իր ման-
կական երեւակայութեան առջեւ :
Այժմէն կը խորհէր այն օրուան մասին ,
յորում բոլորովին նոր եւ նորոյթի
պահանջքին համապատասխան չըջազ-
գեստ մը հագած , ներս պիտի մտնէր
Seminaryի դռնէն , բոլոր հին ու նոր
ընկերուհիներուն ու շաղկապութիւնն ու
նախանձը գրգռելով :

—Գլխարկս ու կօշիկներս ալ նոր
պիտի չըլլան , մայրի՛կ , ինչո՞ւ չես
պատասխաներ , կը հարցապնդէր այն
օր մը :

Այդ գիշեր՝ կաղանդի աղօթքը , մաղ-
թանքներու եւ սրտազնդումներու եր-
կար արտայայտութիւնները ներշնչող
ոգիով մը պարուրած էին Աշխէնին
տան մթնոլորտը : Հայրիկը այդ օր
կարգացեր էր Սամուէլի եւ Հեղիի մա-
սին շատ հետաքրքրական պատմութիւն
մը , որուն մէջ Աստուած բաներ մը խօ-
սած էր , բայց Աշխէն որոշ կերպով

հասկցած չէր զայն... որովհետեւ՝ Աշխէն «տակաւին Աստուծոյ ձայնը չէր ճանչնար»։ Աշխէն կ'ուզէր հայրիկէն հարցնել Աստուծոյ եւ Սամուէլի տեսակցութեան արդիւնքը, բայց կաղանդ գիշերի քաղցրեղէնները եւ հրճուանքները մոռցնել տուին անոր ամէն ինչ։

Աշխէնի մաքուր հոգիին մէջ սակայն, ո՛րքան պարզ, նո՛յնքան խորունկ շահագրգռութիւն մը անթեղուած էր Սամուէլի ծանօթ պարագային շուրջ, որտե՛ մասին երկար ատեն ալ խորհած էր քունը իր աչքերուն եւ գիտակցութեան առջեւ վարագոյր մը քաշելէ տուալ։

* *

Քանի մը օր վերջ զարոյցները վերաբացուեցան։ Կաղանդի եւ ծննդեան արձակուրդները եկեր անցիւր էին, սլացիկ երիզապատկերի մը նման։ Քանի մը օրէ ի վեր, Աշխէնի վրայ մասնաւոր լրջութիւն մը կը նշմարուէր, զոր մասնանշէր էին նոյնիսկ ուսուցչուհիները։ Պատճառը ինքն ալ չէր գիտեր, այդ տարիքին մէջ անհասկնալի խռովք մը կ'ալիւնդէր իր հոգին։ Ծարաթէ մը ի վեր, անըմբռնելի երազի մը յաճախանքը զինքը անըմբռնելի կացութեան մը մատնած էր... Սամուէլի Աստուծոյ երազին մէջ զինքն ալ կանչած էր, բայց Աշխէն բան մը չէր կրցած հասկնալ, որովհետեւ «տակաւին Աստուծոյ ձայնը չէր ճանչնար»։

* *

Սաստիկաշունչ եւ մրրկոտ օդով մը դպրոց կը վազէին բոլոր աշակերտուհիները։ Ումանք սոնք քայլերով, բրդեղէն եւ մուշտակեղէններու մէջ թաղուած, իսկ ումանք ալ սուբայոց հոգին նման արագավազ, անպատասպար մարմիններն տաքցնելու համար։

Արմենուհի այդ օր ալ չէր կրցած բերել ամուսնի դրամը, որ քանի օրէ ի վեր կը պահանջուէր օրիորդէն, զսաս-

րանի վառելանելթին համար։ Խածոտող ցուրտը զգացող ամէն ծնողք փութացեր էր այդ օր ամուսնի դրամը հասցնել դպրոց, մտահոգ՝ իր զաւկին վրայով։ Սակայն Արմենուհի այսօր ալ չէր կրցած դրամ բերել, ինչպէս միշտ, քանի մը շաբաթներէ ի վեր։ Անոր հայրը՝ օրը օրին ապրող համեստ արհեստաւոր մը՝ հինգ շաբաթէ ի վեր անկողնոյ կը ծառայէր եւ տունը շիթ մը ջուր կաթեցնող չկար, հայրիկէն զատ։ Մայրիկը՝ տունն ամբողջ գտաարկելու, ծախելու, թափելու սկսած էր, այս դառն օրերը անցնելու եւ մարդու ձեռք չկարկառելու համար։

Դասարանին մէջ դրամը հաւաքուելու ատեն Աշխէն ձեռքէն վար ձգեց հինգ դահեկաննոցը, զոր վերցնելու ատեն... տաք խոնաւութիւն մը զգաց ձեռքին վրայ։ Ապշահար՝ ձախը դառնալով՝ տեսաւ որ արցունքի ուրիշ երկու կայլակներ ալ կախուած էին Արմենուհիի երկար թարթիչներէն։ Աշխէնի ձեռքին վրայ ինկող արցունքի կաթիլը այրող, բռնկեցնող հոսանք մը մըտրակեր էր բարի աղջկան երակներէն ներս, մինչեւ սիրտը, ուր Սամուէլի Աստուծոյ կրկին այցելիւր էր՝ այդ բուպէին։

— Օրիորդ, այս ինձմէ, այս ալ Արմենուհիէն, կը ճառողէր Աշխէն, երեք տրական լոյսի մը պէս պայծառ դէմքով մը, ուրկէ բարութիւն, ազնուութիւն, եւ այլասիրութիւն կը ճառագայթէր։ Աշխէն Արմենուհիի պարտքն ալ վճարած էր։...

Աշխէն անմիջապէս զգացեր էր այն խոցող գառնութիւնը, որ կը արորէր Արմենուհիի սիրտը եւ կը լացնէր զայն անկարողութեան մը առջեւ։ Օրիորդը պիտի ներէր իրեն, այդպիսի դժնդակ պարագաներու տակ, բայց մանկական աննուաճելի արժանապատուութեանը զգացումը, ջերմ արցունքներ կը վազը-

նէր իր աչքերէն, որոնցմէ կաթիլ մըն ալ ինկած էր իր քովը նստող երջանիկ Աշխէնի ձեռքին վրայ:

Զբօսանքի զանգակը հնչելուն պէս՝ բոլոր աղջիկները սրահը վազեր էին շաղակրատելու: Աշխէնն ու Արմենուհին դասարանը մնացին, իրարու ձեռքերէ բռնած... անխօս, լռու: Անոնք տասը վայրկեանի մօտ, ռաքի վրայ այգպէս մնացին էին, պերճախօս լռութեան մը անձնատուր... Յօգաւոր բարբառը՝ հոգ պիտի եղծանէր երկու անմեղ հոգիներու միջեւ կատարուած անբարբառ սրբասացութիւնը:

Ուսուցչուհին ներս մտնելով, Աշխէն-Արմենուհին տեսած էր անկիւն մը, բոլորովին անէացած, իրարու վշտակից, այլալուծ և հրեշտակային երևութի մը մէջ, որոնց ներքին յուզման արտայայտութիւնները կը նշմարուէին անոնց երկուքին ալ աչքերէն վար գլորող սիրոյ և հրճուանքի երջանկաբեր արցունքներուն մէջ: Անոնք անխօս... լռու ու մուռն, իրարու ձեռքերէ կախուած, կուլային: Ուսուցչուհին չէր ուզեր խանգարել զանոնք, որովհետեւ արդէն մասամբ գուշակեր էր եղելութիւնը, երբ Աշխէն կրկնապատիկ վճարեր էր ածուխի համար:

— Դպրոցական ծախքերուդ համար մի՛ նեղուիր Արմենուհի՛, ես միշտ քո՛յր պիտի ըլլամ քեզի... կը փսփոսար աշխէն վերջապէս: Եւ այդ օրէն սկսեալ այն որոշեց յարգել իր խոստումը:

Յանկարծ զանգակին ձայնը սթափեցուց Աշխէնը: Դրասեղանին առջև անցաւ այն, բացաւ Սամուէլի գիրքը, կարդաց... և հասկցաւ: Աշխէն այդչաւ «Աստուծոյ ձայնը կը ճանչնար»:

«Եւ Աշխէն մեծցաւ, ու Տէրը անոր հետ էր, և իր ըսած խօսքերէն մէկը գետինը չձգեց,» որովհետեւ այլեւս «Աստուծոյ ձայնը կը ճանչնար»:

Հայկոյ

ՌԵՏՈՒՆԻ

ԲԱՆՋԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ ԱՐԺԷՔԸ ՈՐՊԷՍ ԿԵՐԱԿՈՒՐ

Եթէ պատանի ես՝ թերեւս օր մը ըլլաս փաստաբան, բժիշկ, վարչապետ, ճարտարագէտ կամ ուսուցիչ մը: Եթէ աղջիկ ես՝ թերեւս մտադրած ես ըլլալ հիւանդապահուհի, իմաստուն մայր մը եւ կամ վարժուհի, եւ կամ առեւտուրի կին մը: Ինչ որ ալ ըլլայ, պիտի սիրես ունենալ առողջ մարմին մը, տուկուն եւ ճերմակ ակռաներ, պայծառ զիմագրիժ եւ հաստատուն ջիղեր:

Մեր դպրոցներու աշակերտաց երեք չորրորդը թերի սնուցուածներ են. սակայն միայն աղքատութեան պէտք չէ վերադրուի, մեծ մասը տղիւթեան արդիւնք է: Ինչպէս չէնքի մը կառուցման համար կարգ մը նիւթեր ամբողջութեան, զարդի եւ յարդարման կը ծառայեն, նոյնպէս սննդեղէններու մէջ կան նիւթեր՝ որոնց պաշտօնն է զարդ, ամբողջութիւն եւ յարդարում:

Առողջ ապրելու համար ուտեստեղէններու ցանկին մէջ՝ ի մէջ այլոց՝ միշտ ըստւած է. «Բիշ մը կանանչեղէն կեր ամէն օր»:

Կանանչ բանջարեղէն եւ պտուղ պէտք է ուտել ամէն կերակուրէ վերջ, քանի որ անոնք աղիքներու զանգուած եւ լիութիւն տալով կը դիւրացնեն աղիքներու զործունէութիւնը, յետոյ կուտան մետաղային աղեր որոնք կը շինեն կարմիր արեան մարմնիկներ, կը պատրաստեն առողջ ճերմակ ակռաներ, կը զօրացնեն ոսկորներ: Կանանչ բանջարեղէնները նաեւ կը լեցնեն մարմնոյն մէջ ջուրի այն պակասը որ քրտնելով եւ կամ այլ պատճառներով կը պակսին մարմնէն:

Մարդուս առողջութեան չէնքը կանգուն պահող վեց սիւներէն մէկը կը կազմեն կանանչ բանջարեղէնները: Ի՞նչ կը հասկնանք կանանչ բանջարեղէններ ըսելով: Առ հասառակ կանանչ

բանջարեղէններ են անոնք որոնք կերակուրի համար կը գործածուին եւ անոնցմէ է՛ն գործածելիներն են հետեւեալները: Սպանախ, ստեպղին, ճակընդեղ, կաղամբ, հազար եւ ուրիշ շատ մը թարմ կանաչեղէններ:

Պէտք չէ մոռնալ որ սննդեղէնի տեսակը ընտրելու չափ կարեւոր է նաեւ զրտնալ թէ ինչպէ՛ս եփելու եւ պատրաստելու է կանանչ բանջարեղէնները: Յաճախ կանանչ բանջարեղէններու կարեւորագոյն մասերը հալելով ջուրին մէջ կ'անցնին, եւ կրնան դուրս եկող ստիւնի իմէ հոգ չտարուի, եւ կամ ազդէ խոհարարի մը ձեռքը յանձնուի գործը: Ասիկա բացարձակ ճշմարտութիւն մըն է. ամբողջ կանանչ բանջարեղէններու նկատմամբ, պէտք է ռսկեղէն համարի մը նըման, ամէն կերակուր եփող գիտնայ թէ կանանչ բանջարեղէնի ջուրը չպէտք է թափել, քանի որ բուն օգտուելիքը անկէ է:

Եթէ կանանչեղէնները թռչմած ըլլան, նոյն ջուրի մէջ թաթխէ՛ զանոնք եւ յետոյ անոր փոխած կամ սեցած մասերը զտէ, բուսականաչափ ջուրի մէջ եռացընելէ վերջ, լաւ մը գոցէ՛ կաթսան եւ տակը մեղմացուր, որ յետոյ վրան շատ ջուր աւելցնելու չստիպուիս, եւ կորսընցընես կերակուրիդ համը: Կանանչեղէնով եւ պտուղներով սնուցուողը աւելի դիմացկուն եւ տոկուն կ'ըլլայ որպէս արդիւնք դիտական փորձարկութեանց: Աշխատանքը միանաւորի մէջ անիս շաքիխ կ'արտագրէ: Արիւնը կտաքարային ըլլալով անմիջապէս կը չէզոքացնէ՛ պայն եւ անիս շաքիխ՝ ւրեան թթուածինով կ'այրէ: Եթէ մէկը մտակիր է, անիս շաքիխի չափազանց արտագրութիւնը՝ յառաջ կը բերէ յոգնութիւն եւ թուլութիւն մկանտեղներու մէջ:

Եւսովան արգիլեց միտը այն ընտրելիներուն սրտնք զատուած էին իրեն ծառայութեան համար: Դանիել եւ իր ըն-

կերները մտքի, հոգեկան եւ ֆիզիքական բարձրագոյն կատարելութեան համար մտեղէն կերակուրներէ հեռու պահեցին ինքզինքնին:

Կերակուրի համար գործածուած բոլոր թսչունները եւ կենդանիները միշտ կը կրեն իրենց մէջ սովորական մանրէներ, եւ յաճախ ալ խիստ վտանգաւոր մանրէներ, մինչդեռ բուսային սնունդներէ կամ կանանչ բանջարեղէնէ, ընդեղէնէ, նուշէ, ընկոյգէ եւ պտուղներէն կարելի է միշտ բացարձակապէս անվտանգ կերակուրներ պատրաստել:

Թէպէտ անձամբ բուսակեր եւ բանջարաւէր չեմ հղած, բայց անուրանալի ճշմարտութիւն մըն է թէ՛ հոր մարդս փոխանակ խեղճ անասունները մորթելու եւ զանոնք վայրագաբար յօշոտելու սոսկ նուշ եւ բանջարեղէններով կը սնուցուի, հանգանտ կ'ըլլայ բնութեամբ, եւ կը հեռանայ զիշատիչ զգացումներէ:

Լուծիճի Գորնարոն, Վենետիկեան ԺՁ. դարու ազնուականը, շնորհիւ բանջարեղէն սնունդի իր անսովոր երկայն կեանքին վերջի օրերուն մէջ, խոստովանեցաւ որ մտքի, սրտի եւ հոգեկան աներեւակայիլի ոյժեր վերստացած է: Անուրանալի է որ ընդհատուած ծով եւ բանջարեղէն սնունդներ մտքի եւ հոգեկան նոր սնունդներ կ'ուտան, ուղեղի եւ մշտքի հորիզոնը կ'ընդլայնեն:

Իտալական Եւստոն աստիղագարդ երկնից, հեռաւոր մոլորակներու եւ աստղերու զաղտնիքները լուծելու ժամերուն մէջ, մտքի յափշտակութեամբ վերացած, իրարու հետեւ չճաշակուած կերակուրներու պնակները ետ կը վերադարձնէր, ի բաց առեալ թեթեւ բանջարեղէնները:

Փարսի Շիրլի յաճախ բանջարեղէնէ շինուած արգանակով գոհանալով չէր ուղեր պղտորիլ իր բարձր բանաստեղծական նեկտարը ծանր կերակուրներով եւ հեռացնել իրմէ Մուսան. շատ անգամ ծանր հաւաքանքով կ'ընդունէր ճաշի

հրաւէր մը: Պենետիկո Սփինդուա իրեն ամուրի խուցի մագաղաթներու կոյտերուն մէջ օրերով միսի եւ կերակուրի երես չէր տեսներ, բաւականաւնալով թեթեւ կանանչ բանջարեղէնէ շինուած կերակուրով մը, գինովցած ըլլալով Աստուածային բարձր մտախոհութիւններով:

Անուրանալի է թէ պարզ բանջարեղէնէ կերակուրները, եթէ կարելի է ընդհատական ծոմերը, կը մաքրեն ուղեղը եւ հոգին, վառնք շրջապատող թմրեցուցիչ ուստայներէն:

(ՏՈԳԹ.) Ա. ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՇՈՂԵՐ

ԿՈՐԾԱՆՈՒՈՂ ԵԿԵՂԵՑԻՆ

Նկարիչէ մը խնդրեցին որ կործանուող եկեղեցիի մը պատկերը գծէ: Եւ նկարեց. բայց բոլորը նախ զարմացան հին, աւերակ շէնքի մը փոխարէն տեսնելով հոյակապ եւ արդիական շքեղութեամբ շէնք մը, որուն բաց թողուած դռներէն կը տեսնուէին ճոխ կերպով քանդակուած ամպիոնը, գեղեցիկ երգէհոնը, եւ գեղեցիկ կերպով նկարուած ապակիէ փեղկերը: Մեծ զրանցքին մէջ գեղազարդ գանձանակ մը դրուած էր: Բայց գանձանակին ճիշտ վերը քառակուսան տուփ մը կախուած էր սա մակադրութեամբ. «Արտաքին Աւետարանչութեան համար.» եւ սնտուկին ճիշտ ծակին վրան, ուսկից նուէրները պիտի դրուէին, մեծ սարդի ուստայն մը նկարուած էր: Դիտողները ահա հոս գտան նկարիչին գաղափարը կործանուող եկեղեցիին մասին:

ԱՌԱՆՑ ՓՈԽԱՐԺԷՔԻ

Գնդապետ Բուզդէլը, որ ապա Մ. Նահանգներուն նախագահը եղաւ, ար-

շաւանքի մը միջոցին անդիդէնի եւ բըժըշկական պաշտօնի միջոցով մը եկաւ. «Հիւանդ մարդերու համար համով բաներունը քծախու», հարցուց նա: «Ո՛չ», եղաւ պատասխանը: «Բայց մարդերու նոնց պէտք ունին, եւ ես հպարտ եմ տնոնցմով» ըսաւ Բուզդէլը: «Եւ անոնք ալ քեզմով հպարտ են, Տէր գնդապետ» պատասխանեցին, «բայց մենք չենք կրնար կարծիք խաչի պատկանող բան մը ծախել»: «Ո՛րեքն ի՞նչ պէտք կրնամ հսկանոնք ունենալ», հարցուց Բուզդէլը: «Միայն ուզէ՛, Տէր գնդապետ» ըսին իրեն: «Ուրեմն պարկ մը լեցուն տուր, եւ ես զայն պիտի տանիմ:» Այսպէս գնդապետը պարկը շաւկեց, զոր թէպէտ չէր կրնար գնել բայց խնդրելով ստացաւ: Այսպէս ալ մեր երկնաւոր Հայրը իր ուստ շնորհքները մեզի կուտայ իր միայն խնդրենք:

ՓՈԽՈՒԱՅ ԶԱՓԱՆԻՇԸ

Մեծ քաղաքի մը աղտոտ թաղին մէջ մեծցած պղտիկ աղջիկ մը 15 օրուան համար գիւղ մը տարուեցաւ: Ագարակին մաքուր մթնոլորտը, կանանչ դաշտերը եւ անտառով ծածկուած բլուրները այս աղտոտ թաղին փոքր բնակիչին համար իրական դրախտ մըն էին: Բայց շատ չանցած անիկա քաղաք վերադարձաւ բնակեցու իր աղտոտ խցիկին մէջ, զոր տուն կը կոչէր: Սենեակը մտնելուն պէս գարշանքով դիտեց թշուառութիւնն ու աղտոտութիւնը եւ բացականչեց. «Ո՛հ, մայր, ի՞նչ պատահած է մեր տան, ամէն տեղ աղտոտ, գարշատեսիլ եւ խուար է:» Տունը չէր փոխուած բայց բնութեան գեղեցկութեան հետ հակադրելով զայն անհանդուրժելի կը գտնէր: Ծիշտ այս է որ մեղաւորներու կը պատահի, որ իրենց թշուառ վիճակը չեն կրնար ըմբռնել մինչեւ որ նոր կեանքի ջախքանն եւ անոր գեղեցկութեանը հետ զայն չհակադրեն:

ՇԱՀԵԿԱՆ ՆՕՔԵՐ

ՊԱՂԱՌՈՒԹԵՆԷՆ և ինֆլուենզայէն խուսափելու համար կերակուրիդ մէջ առատօրէն դործածէ կաթ, պանիր, կարագ, սալատներ, կանաչ բանջարեղէններ և պտուղ։ Մարմինդ շատ տաք մի պահեր, շատ մի՛ յոգնեցներ, մինչև ուշատեն գիշերները արթուն մի՛ կենար, լաւ՝ քնացիր, սենեակներդ լաւ օդաւորուած պահէ, բայց հոսանքներէ զգուշացիր, կոկորդդ կարկարաւ ըրէ, քիթդ ամէն առաւօտ և ամէն իրիկուն աղի տաք ջուրով լուա։

ՄԱՐԴԸ ԵՒ ՄԻՋԱՏԸ

Միջատաբանները կ'ըսեն թէ երկիրն վրայ մարդուն մեծագոյն թշնամին և մրցակիցը միջատներն են։ Ներկայ գիտութիւնը տակաւին անզօր կը մնայ բոյսերը բնաջնջող կարգ մը միջատներու դէմ։ Եւ սակայն կան միջատներ որոնք մարդուն բարեկամները, բարերարներն են։ Մեր վայելած շատ մը պտուղները կը պարտինք միջատներու գործունէութեան, որոնք սերմնափոշին ծաղիկէ ծաղիկ փոխադրելով բեղմնաւորում յաւաջ կը բերեն։ Բայց ասկէ աւելի կարեւոր ծառայութիւն մ'ունին կարգ մը միջատները։ Հողի տակ կարգ մը հասարակօրդեր բուսական կեանքի համար պէտք եղած սնուցիչ հողեր կը պատրաստեն։ Տր. Լուց կ'ըսէ թէ ուէցամաքային բոյս մը առանց այս որդերու դործունէութեան կարելի չէ։ Երկրաբաններու կարծիքին համեմատ բուսական կեանքը զարձակ չափով կարելի եղած է այն միջատներու լաւ մը հաստատուելէն վերջ։

ԼՈՒՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՊԷՅՐՈՒԹԷՆ կը գրեն Հայ Աւետ. Ա. Եկեղեցիին մասին, —

Ամստուան արձակուրդէն յետոյ,

Հոկտեմբերին Եկեղեցին կ'սկսի լիցուիլ բազմաթիւ հոգի. 5 Կիրակի առատուան քարոզին նիւթն էր «Մենք և մեր դպրոցները», Կոչ մը աշակերտութեան. այս պաշտամունքին ներկայ ըլլալու համար հրաուիրուած էին Պէյրութի Հայ Աւետ. Գործընկերու աշակերտութիւնը և անոնց ուսուցչական կազմը։ Պրն. Բ. Գրիգորեան (Ամերկ. համալս.) բացման նշոթքով, Պրն. Յ. Եսպուպեան (Հայ Աւետ. Բարձ. Վարժ.) Սր. Գրոցընթերցումով, և Պրն. Ե. Տէր Մկրտիչեան (Աստուածբ. Ճեմարան) աղօթքով իրենց մասնակցութիւնը բերին պաշտամունքին։ Իրապէս այս կարգադրութիւնը խիստ քաջալերական եղաւ աշակերտներուն։

Հոկ. 22 երեկոյեան քաղաքիս զոյգ Աւետ. Եկեղեցիներու նահաճեռնութեամբ ի պատիւ Friends of Armenia ընկերութեան Ընդհ. Քարտուղարը եղող հաղարապետ Գորկայնի և իր Տիկնոջ ընկերային երեկոյթ մը տրուեցաւ, որուն նահագահեց Վեր. Հասէսեան. Վեր. Կէօքկէօկեան Անզղ. լաւ գրութիւն մը կարգաց, ապա Մր. Գորգայն Հայոց հանդէպ իր հիացումը արտայայտեց անմիջական պէտքերու համար կարգ մը խոստումներ ըրաւ։ Ներկայ էին մօտ 160 հոգիներ։ Ներկաները հիւրասիրուեցան պաղպաղակով և խմորեղէնով։ Եկեղեցիին հոգաբարձութիւնը բարի զաղափարը ունեցաւ եկեղեցիին դռներուն քով երկու սնտուկներ զնելու, խնդրելով որ ամէն մարդ իր ծննդեան տարեգարձին զրամական նուէր մը դնէ հոն։ Ուրախ ենք որ շատեր կը մասնակցին։ Հասոյթը ապագային շինուելիք եկեղեցիի մը շէնքին համար պիտի գործածուի, որուն այդքան պէտք ունինք։

Հոկ. 19ին Կիրակի կէսօրէն յետոյ 20-25 եղբայրներ զոյգ զոյգ իրենց վիճակուած ընտանիքները այցելեցին։ Բարի նպատակը այն էր որ մէկ օրուան

մէջ բոլոր ժողովուրդը այցելուի: Դնա-
հատելի էր այս ձեռնարկը: Ընդհանուր
առմամբ թէ այցելողները եւ թէ այցե-
լուողները օգտուեցան: Կ'արժէ կրկնել:

Տարիներէ ի վեր հովիւին եւ եկեղեցիին
համար մեծ խնդիր մըն էր «անտուն աղ-
ջիկներու» վիճակը: Վերջապէս աղօթ-
քով տեղ մը գնուեցաւ ուր վեց սենեակ-
նոց կոյիկ չէնք մը շինուեցաւ: Օտար
բարեկամներուն օգնութիւնը գնահատե-
լի եղաւ:

Հոկ. 23ին կէսօրէն յետոյ Փրոֆ.
Զ. Պէլզհան, Վեր. Ե. Հատիտեան, Վեր.
Կ. Հատէսեան եւ Վեր. Ե. Կէօքկէօղեան
այցելութիւն մը տուին Անթիլիսիս հառ-
տատուած Վեհ. Կաթողիկոսին, Բարդէն
եւ Եօհէ Արքայաներուն եւ ջերմ ընդուն-
նելութեան մը առարկայ եղան:

Այս տարի Տոնոյ Բարձ. Վարժարանը
իր կարող տնօրէնով եւ ուսուցչական կազ-
մով արժանի է գնահատանքի:

Ինչպէս միւս բոլոր եկեղեցիները,
նմանապէս Պէյրութի Հայ Աւետ. Ա. Ե-
կեղեցին կարօտ է բոլոր բարեկապներուն
ջերմ աղօթքին:

ՀԱՂԱՐԱՊԵՏ ԳՈՐՊԱՅՆԻ ԱՅՅԸ

Մր. Ֆ. Գորպայն, Բրիտանական
նաւատորմի նախկին պաշտօնեաներէն,
որ 1926ին, հրաժարելով ինքզինքը կը
նուիրէ ռիլիֆի գործին եւ ներկայիս
«Պրէնտը օվ Արմէնիա» ընդհանուր
քարտուղարն է, եկած է Սիւրիոյ մէջ
չըջան մ'ընելու եւ մօտէն տեղեկանա-
լու հայ կեանքին: Պէյրութէն ետքը
կ'այցելէ Հալէպ, ուր Հոկ. 26ին կը խո-
սի Հայ Աւետ. երկու եկեղեցիներու
մէջ, եւ կուտայ իր կարեկցութեան
պատգամը նման բառերով: Պր. Եր-
ուանդ Աղէկեան, Պէյրութէն մեզի կը
տեղեկագրէ հետեւեալը.

Մր. Գորպայն 12 Հոկտ. Կիրակի ա-
ռաւօտ ժամը 8.30ին խոսեցաւ Հայ Ա-

ւետ. Բ. Եկեղեցւոյ մէջ եւ Տիար Յովհ.
Արքարեան, թարգմանեց անոր խօսքե-
րը, որուն ամփոփումը կուսամ ստորի.

«Աւրախ կ'զգամ ինքզինքս եւ հպարտ
այս առաւել ձեր մէջ գտնուելուս եւ մա-
նաւանդ ձեզի խօսելու գեղեցիկ առիթը
ունենալուս համար, զի զուք ազգովին
հարստահարուեցաք, հալածուեցաք,
ջարդուեցաք, ահուլի տանջանքներու
ենթարկուեցաք, որուն մէկ վերջիչումն
խակ ահ ու սարսուռ կ'ազդէ եւ կը վերի-
վայրէ մարդուս բովանդակ էութիւնը,
եւ ի վերջոյ լքուեցաք Եւրոպական տե-
րութիւններէն, որոնք ձեր մարտիրոս
ազգին այնքա՛ն արդար դատին պաշա-
պանութիւնը ստանձնած էին: Բայց
այս բոլորէն յետոյ, զուք դարձեալ հա-
ւատարիմ գտնուեցաք Աստուծոյ հան-
դէպ, հեռու ձեր գրախտագիւ հայրենի-
քէն օտար երկիրներու մէջ հաստատե-
ցիք կրթական եւ եկեղեցական հաստա-
տութիւններ՝ այնքա՛ն արժանի Աստ-
ուածը պաշտելու, եւ ձեր նոր սերուն-
դին գեղեցիկ ու բարձր զաւաժարներ
ներշնչելու համար:

«Այս հիւզաւաններու մէջ՝ ուր դուք
... ստիպուած էք ապրելու, ուրախու-
թեամբ եւ զոհունակութեամբ տեսայ եւ
հաստատեցի մաքրասիրութիւն, աստ-
ուածապաշտութիւն եւ ապրելու համար
անսովոր ու քաջակորով աշխատանք,
ինչ որ զարմանք եւ հիացում առթեց
ինձ: Ձեր բոլոր բարեմասնութիւններն
ու տուաք ինութիւնները, ինչպէս նաեւ
անվհատութեան, նախաձեռնութեան
համարձակ ոգին ձեզի կը պատկանին,
իսկ քէմբերու մէջ եղած աղոթութիւն-
ներն ու թշուառութիւնները՝ մեծ տէ-
րութիւններուն...»

«Ասկէ առաջ կրօնական պարբերա-
թերթերու մէջ կարդացած եմ Հայաս-
տանի եւ Հայ ժողովուրդի մասին, եւ
զանազան առիթներով շատ մը հաւա-
քոյթներու եւ ժողովներու մէջ խօսած

անոր օգնելու նուիրական գործին մասին, եւ ամէն անգամուն ալ ակնկալուածէն եւ նախապէս խոստացուածներէն աւելի դրամ հաւաքելու յաջողած եմ: Անգլիոյ եւ Անգլիական ժողովուրդին մէջ Հայաստանի եւ Հայ ժողովուրդի մասին նպաստաւոր կարծիք եւ համակրութիւն ստեղծելու համար խօսիլ հարկ է: Ես Անգլիա վերադարձիս իր մէջ 6 հազար հոգի պարփակելու չափ ընդարձակ սրահի մը մէջ խօսելու հրաւիրուած եմ, ուր ձեր մասին պիտի խօսիմ: Կը խնդրեմ, ազօթե՛ցէք որ այդ սրահը լեցուն ունկնդիրներով եւ իմ խօսածներս արգասաբեր հողին մէջ ինկած հոռետին պէս պտղաբեր ըլլան: Ձեր մասին պէտք եղած բոլոր բաները, ինչպէս նաեւ ձեր նախաձեռնութեան, համարձակութեան մասին, պիտի խօսիմ Անգլիական կառավարութեան որ ամէնէն աւելի աստեղ հիացող եւ գնահատող մըն է:»

«Ըսի թէ՛ տակէ տառջ ձեր մասին քանիցս խօսած եմ, բայց առանց քեզ տեսնելու եւ ձեր մասին ստոյգ, վաւերական տեղեկութիւններ ունենալու: Հիմա ամէն բան աչքովս տեսայ, որուն մասին ամբողջ Անգլիոյ մէջ պիտի խօսիմ: հոն կայ դասակարգ կը որ ձեզ կը պիտի, զի դուք քոյրեր եւ եղբայրներ էք՝ Յիսուս Քրիստոսով:»

«Ես կ'զգամ ու կը հաւատամ միանգամայն թէ, Աստուած Հայաստանի եւ Հայ ժողովուրդին մասին մասնաւոր նըպատակ մը, ծրագիր մ'ունի որ իր ուղած ձեռով պիտի իրադործէ անշուշտ:»

Մր. Գորպայնի այս խօսքերը լատպաւորութիւն թողուցին բոլոր ունկնդիրներուն վրայ, որոնց գէմքին եւ աչքերուն մէջ կը կարդացուէին գոհունակութեան զգացումը:

Վեր. Կ. Հասեսեան զգացուած չեղտով շնորհակալութիւն յայտնեց Մր. Գորպայնի «Ֆրէնտզ ալ Արմենիա»ի, եւ

խնդրեց որ Մր. Գորպայն բարեհաճի հայ ժողովուրդին շնորհակալութեան զգացումները, միւրախր բարենները հաղորդել ընկերութեան բոլոր անդամներուն:

ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ, Հալէպ, նոր կառուցուելիք շէնքին գետնին վրայ հիմնարկէքի պարզ արարողութիւն մը կատարուեցաւ Հոկտեմբերի վերջը: Բրիչի առաջին հարուածը տրուեցաւ Միսի Գորպայնէ, որուն յաջորդեցին հազարապետ Գորպայն, Վեր. Կ. Յարութեան, Յովհ. Շնորհաքեան, Տ. Ճ. Խրչեան (փոխանորդելով Տիար Ա. Կիւլէսէրեանը), Վեր. Ս. Ս. Մանուկեան եւ այլն: Դպրոցին շէնքը պիտի շինուի «Ֆրէնտզ ալ Արմենիա»յի կողմանէ ի յիշատակ Միսի Ֆրէյզլըրի, պիտի ըլլայ եռաշարի, պիտի պտուռնակէ դպրոցին գասարանները, զիշերօթիկներու բաժինը, տեսուչին բնակավայրը: Պէտք եղած արտօնութիւնը առնուած է ջրհապատի շինութեան, որուն պիտի ձեռնարկուի մօտեքս. մօտ օրէն շէնքի արտօնութիւնն եւ կ'ստացուի: Շինութեան ծախքին շատ մը Հայեր եւ ոչ-հայեր եւ մասնակցած են:

ՏԻՍՐ ԷՄՄԱՆՈՒԷԼ ԹՕՓԱԼԵԱՆ բնիկ Մարաշցի բարեհամբաւ երիտասարդը, որ ասկէ մօտ տասը տարի առաջ Մ. Նահանգներ գացած էր եւ ատենէ մ'ի վեր Պոսթոնի մօտ եկեղեցական բարեգործական հաստատութեան մէջ կը պաշտօնավարէր, քաղաքս եկաւ ամուսնանալու համար Վեր. Ա. Շիրաճեանի գետեր՝ Օր. Միլիա Շիրաճեանի հետ: Պաակի արարողութիւնը կատարուեցաւ Նոյ. 1ի զիշերը, Ազիզիյէի Հայ Աւետ. Եկեղեցիին մէջ, Վեր. Կ. Յարութեանի կողմանէ, մեծ թիւով ազգականներու եւ բարեկամներու ներկայութեան:

صاحب الامتياز و مدير المسئول
نيس قريه هاروتونيان